ՄԱՐԴ ԽՑԱՆ։ Բոլոր լուղորդները հաւատացնում են, որ ծովում լողանալը աւելի հեշտ է քան գետի մէջ։ Այդ բանը այսպէս են բացատրում, որ ծովի ջուրը աւելի շատ աղ պարունակելով իւր մէջ՝ աւելի թանձր է լինում գետի ջրից։ Լինում են դէպքեր, երբ այդ տեսակ ջրի մէջ լողանալու համար ստիպուած են լինում իրանց մարմնից զանազան տեսակ ծանրութիւններ կապել. հակառակ դէպքում անհնար է լինում ջրի մէջ խորասուզուել, այլ միշտ մարմինը ջրի մակերևոյթի վրայ է մնում։ Այդ անյարմարութիւնը զգալի է գլխաւորապէս չաղ մարդկանց համար, որովհետև չաղութիւնը միշտ ջրի երեսին է մնում։

Բայց կան և այնպիսի մարդիկ, որոնք ինչպէս ասում է բժիշկ Կարտացը «Nature» լրագրում, չեն կարողանում մնալ ջրի մէջ և միշտ խցանի նման բարձրանում են ջրի երեսը։ Մի երիտասարդ բժիշկ Ֆերրիյէն նորերս այդ տարօրինակ հիւանդութեան մասին մի քանի հետաքրքրական հետազօտութիւններ է կատարել։

Մի նորատի օրիորդ, որ բոլորովին առողջ տեսք ունէր, չէր կարողանում աւազանի մէջ նստած դիրքով մնալ. ամենայնչին շարժումից, մարմինը տեղափոխուում էր և միշտ կարծես թէ դէպի ջրի մակերևոյթն էր քաշուում։ Մի ուրիշ հիւանդ ջրի մէջ կարողանում էր միայն կանգնել. հենց որ ուզում էր նստել՝ գլխի ծանրութիւնից ընկնում էր երեսի վրայ։ Այդ նշանակում է որ մարմնի ներքևի մասը աւելի թեթև է, քան նոյն ծաւալով ջուրը փայտի կտորի կամ խցանի նման ձգտում է բարձրանալ ջրի երեսը։

Այդ երևոյթը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի տեսակ հիւանդութիւն, կմախքի կամ ոսկրների ծանրութեան պակասութիւն։ Զանազան պատճառների ազդեցութեամբ ոսկորի մէջ փոխուում է հանքերի բաղադրութիւնը, պակասում են մի քանի աղեր. ոսկորները թեթևանում են և կորցնում իրանց ընդիմադրութեան ոյժի մեծ մասը. Ֆարրիյէն այդ հիւանդութիւնը անուանել է osteocia։

Այդ հիւանդութեան ժամանակ կրի բացակայութիւնը այնքան էլ կարևոր երևոյթ չէ համարուում։ Այդպիսի հիւանդութիւնները տարածուած են առհասարակ այնպիսի տեղերում, որտեղ խմելու համար աւազաններում հաւաքած անձրևի ջուր են գործածում, թէպէտ իհարկէ միայն այդ չէ պատճառը։ Պատճառներից մէկն էլ բաւարար չափով հանք չպարունակող սնունդն է։

Վերոյիշեալ հիւանդութիւնից հետևեալ միջոցներով են բժշկուում։ Կերակրի մէջ աւելացնում են պակասող հանքը, տալիս են ֆոսֆատ, ֆիֆոսֆատ, կարբոնատ և Վիշի ու Սէն Գալմիէ ջրերը և այլն։ Վերջապէս հիւանդներին կերակրում են խորոված մանրիկ ձկներով։ Մի քանի ամիս այս եղանակով բժշկուելուց յետոյ՝ հիւանդները կարողանում են ազատ կերպով լողանալ գետի մէջ։

ՕՐ. ՆՈՒԱՐԴ ԱՂԱՆԵԱՆՑ